Արձանագրության 3

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հ.33 մանկապարտեզի բակի վերանորոգման նախագծա-նախահաշվային փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30.04.2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան /գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/, Լ. Գևորգյան /բացող/, Ս. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «**ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/38**» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հ.33 մանկապարտեզի բակի վերանորոգման նախագծա-նախահաշվային փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մատասյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

---------- Լ. Գևորգյան

---------- Ս. Գևորգյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան